ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 102/10

Քաղ. Երեւան 05 մարտի 2010թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. մարտի 5-ի նիստում (արձանագրություն N77/8) քննարկեց «Իյգիտ Ակու Մալզեմելերի Նակլիյաթ Թուրիզմ Ինշաաթ Սանայի Վե Թիդժարեթ Անոնիմ Շիրքեթի» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա. Գալոյանի 2010թ. փետրվարի 9-ի «PLATIN BATTERY» (հայտի համար՝ 20081019) համակցված ապրանքային նշանի կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման համար հիմք են հանդիսացել "Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին" ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի "գ" ենթակետը և "Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի" 12.3-րդ, 90.5-րդ և 90.15-րդ կետերը, համաձայն որոնց, նշանը գրանցման ենթակա չէ, քանի որ այն իրենից ներկայացնում է ապրանքի տեսակ, այն է՝ PLATIN BATTERY արտահայտությունը, արտահայտությունը թարգմանաբար նշանակում է պլատինե մարտկոց, որը մարտկոցի մոդել է, հետևաբար դրա օգտագործման բացառիկ իրավունքը չի կարելի ընձեռել որևէ անձի, նկատի ունենալով, որ առևտրային գործունեության ընթացքում բոլոր անձինք օրինաչափ ձևով կարող են օգտագործել այն: Ինչպես նաև "Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին" ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի "գ" ենթակետի, 12-րդ

հոդվածի 1-ին կետի "բ" ենթակետի և "Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի" 15-րդ կետի 2-րդ և 93-րդ կետի 2-րդ ենթակետերի համաձայն, նշանը չի կարող գրանցվել ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան, նույնատիպ ապրանքների համար միջազգային գրանցում ունեցող ավելի վաղ առաջնությամբ՝ «PLATINUM X» (GOLDEN INTERSTAR GmbH, Stattgarter Str.36, 73635 Rudersberg (DE), IR 918041) շփոթելու աստիճան նման ապրանքային նշանի առկայության պատճառով, քանի որ հայտարկվող նշանը ունի ձայնային նմանություն վերը նշված նշանի հետ:

Բողոքը ներկայացրեց կոլեգիայի անդամ պրն.Ա. Բաբայանը, նա նշեց, որ 2009 թվականի նոյեմբերի 9-ի կրկնական փորձաքննության որոշմամբ «PLATIN BATTERY» ապրանքային նշանի իրավական պահպանությունը ՀՀ տարածքում մերժվել է եւ ներկայացրեց մերժման հիմքը:

Կոլեգիայի անդամ պրն. Ա. Բաբայանը փաստեց, որ կոլեգիայի անդամների ընդհանուր քննարկման արդյունքում, ինչպես նաեւ փորձաքննության բաժնի հետ պարզաբանումներ կատարելուց հետո, որոշվեց վերանայել այն մերժման հիմքը, որը վերաբերում է մարտկոցի մոդելին: Ընդհանուր որոշմամբ հերքվեց, որ տվյալ ապրանքային նշանը հանդես է գալիս որպես մարտկոցի մոդել:

Պրն. Ա. Բաբայանը նշեց, որ տվյալ դեպքում չի գործում «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետը:

Փաստվեց, որ PLATIN բառը, որպես այդպիսին որեւիցե իմաստ չունի, հայերեն պլատին բառը թարգմանվում է որպես PLATINUM: Փորձաքննության բաժնի կողմից շեշտվեց, որ չնայած այն հանգամանքին, որ PLATIN բառը ոչ մի իմաստային արտահայտություն չունի, բայց սպառողի մոտ այն կդիտվի որպես պլատինե բառի նշանակություն:

Ընդհանուր քննարկման արդյունքում հիմք ընդունելով վերոգրյալը եւ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Իյգիտ Ակու Մալզեմելերի Նակլիյաթ Թուրիզմ Ինշաաթ Սանայի Վե Թիդժարեթ Անոնիմ Շիրքեթի» ընկերության բողոքը մասնակիորեն եւ գրանցել «PLATIN BATTERY» (հայտի համարը՝ N 20081019) հայտարկված ապրանքային նշանը առանց BATTERY բառին ինքնուրույն պահպանություն տրամադրելու։

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումն ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան։

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան